ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

24 փետրվարի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

24
(2874)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ԲՈԼՈՐԸ ՄԵՂԱՎՈՐ ԵՆ, ԲԱՑԻ ՆԱԽԱՐԱՐԻՑ

Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանն այս անգամ էլ էր անտեղյակ կամ անտեղյակ ձեւացավ լրագրողների մոտ: Կառավարության նիստից հետո, երբ նրան հարցրել են Առողջապահական տեսչական մարմնի բժշկական օգնության եւ սպասարկման վերահսկողության վարչության պետ Քրիստինա Աբրահամյանի կալանավորման դեպքից, Ավանեսյանը շտապել է հայտարարել. «Ճիշտն ասած, այս պահին ոչինչ չունեմ ասելու: Ես տեղյակ չեմ, որ Քրիստինա Աբրահամյանին կաշառք տվող կինը վերջերս ձեռք է բերել ֆիզիոթերապիայի ինստիտուտը»:

Հայտարարել է ու հեռացել լրագրողներից: Մինչդեռ, առողջապահության նախարարը պետք է արդեն տեղեկացված լիներ դեպքի մանրամասներից, դեռ ավելին՝ ֆիզիոթերապիայի ինստիտուտի ճակատագրից: Չենք բացառում, որ նա տեղյակ է, բայց լրագրողների մոտ չի ցանկացել անկեղծանալ: Սա էլ է տարեբրակ, որովհետեւ լրագրողները կարող է մի քանի հարց տային, ու հիմնավորվեր, որ Ավանեսյանը չի տիրապետում իր գլխավորած ոլորտին, իր թիկունքում ով ինչ ուզում, անում է, կամ, ընդհակառակը, նա հովանավորում է:

Առողջապահական համակարգում մի սկանդալ էլ կապված է 44-օրյա պատերազմից հետո 2-րդ ԴՆԹ սեկվենատորի ձեռք բերման գործընթացի հետ: Այս գործով եղավ ձերբակալություն, թեեւ բանը կալանքի չհասավ: Բայց այս դեպքում էլ Անահիտ Ավանեսյանը եղել է առողջապահության փոխնախարար, ավելի ճիշտ՝ նախարարի առաջին տեղակալը, որի համակարգման ոլորտում են եղել նման հարցերը: Ավանեսյանը կրկին լռում է:

Ու այս պատմություններին զուգահեռ, Ավանեսյանը շարունակում է պաշտոնավարել՝ ոլորտի ձախողումների ու բացթողումների մեղքը փորձելով այլոց վրա գցել, ինչպես եղավ փոխնախարար Արմեն Նազարյանի հետ, որին փետրվարի 23-ի որոշմամբ, ի վերջո, Նիկոլ Փաշինյանն ազատեց աշխատանքից, թեեւ վաղուց էին ասել՝ դիմում գրիր գնա: Ավանեսյանը պաշտոնավարում է, որովհետեւ հասկացել է՝ պետք է Նիկոլ Փաշինյանին անվերապահ ենթարկվել, երբեք չհակառակվել, կուսակցական ու ոչ կուսակցական միջոցառումներին էլ որքան հնարավոր է շատ մասնակցել, աչքի ընկնել ակտիվ կոմերիտականի նման:

Դա է պատճառը, որ առողջապահական ոլորտը այս վիճակում է:

---

Երեկ կառավարության նիստում Փաշինյանը հարկ չվճարողներին տողատակով հորդորեց քայլել Զանգուի ձորով եւ խոտածածկ տարածքով: Հարկ չվճարողների շարքը թվարկելիս առանձնացրեց նաեւ շոուբիզնեսի ներկայացուցիչներին, որոնք գնում են երկրից դուրս հարկերով սարքված ասֆալտի վրայով, իսկ իրենք հարկ չեն վճարում: Վարչապետ Փաշինյանը հարկում է բոլոր աշխատողներին Հայաստանից մինչեւ արտասահման, սակայն սեփական սիրելիներին ազատում է հարկ վճարելու պարտավորությունից: Վերջերս սուրճի եւ հրուշակեղենի խոշոր ներմուծող «Վենդա» ՍՊԸ-ն՝ հայտնի «Չայկոֆ» խանութների ցանցը, ՊԵԿ-ի կողմից ստացել է «օրինապահ հարկ վճարողի» կոչում (ներկայացնում ենք փաստաթուղթը), բայց մյուս կողմից՝ ՊԵԿ-ի հետ օրգանապես կապված Ֆինանսների նախարարության կողմից ճանաչվում է «գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող» հարկատու, այլ կերպ ասած՝ հայտնվում է պետական գնումների սեւ ցուցակում: Տեղեկացնենք, որ այս ընկերության հետ նախորդ տարվա ընթացքում պայմանագրեր են կնքել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը, «ՀՀ Սեւանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ն, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ն եւ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն: Ծառայությունների արժեքը կազմել է, օրինակ՝ 1 մլն 380 հազար դրամ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի հետ: Գնումը եղել է մեկ անձից, իսկ գնման առարկան եղել է նվեր, որն իր մեջ ներառել է 375 փաթեթ, որից յուրաքանչյուրը ներառում է 2 տուփ թեյ, 2 տուփ սուրճ եւ մեկ շոկոլադե սալիկ, ինչպես նաեւ 50 տուփ սուրճ: 2024 թվականին, այս ընկերության հետ կատարված գնումներ դեռ չկան:

---

Նիկոլ Փաշինյանի աջակիցների հերթական հակաեկեղեցական նախաձեռնությունը տապալվել է: «Ժողովուրդ» օրաթերթը դեռ հունվարի 26-ին գրել էր, որ Նիկոլ Փաշինյանի աջակիցները նոր շարժում են ձեւավորվել՝ «Վարդանանք» անվամբ, ու պատրաստվում են փետրվարի 24-ին ակցիա իրականացնել՝ ընդդեմ Վեհափառի՝ պահանջելով նրա հրաժարականը: Գրել էինք նաեւ, որ ընդդեմ Վեհափառի այս շարժման նախաձեռնողը Անդրանիկ Դովլաթյանն է: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նրանք նախապես դիմել են Էջմիածնի քաղաքապետարան՝ ընդդեմ Վեհափառի ակցիա իրականացնելու համար, սակայն քաղաքապետարանը մերժել է ու թույլ չի տվել ակցիա իրականացնել: Տեղեկացանք, որ փոխարենը ընդդիմադիր տարբեր գործիչներ՝ «Մայր Հայաստան» դաշինքի առաջնորդ Անդրանիկ Թեւանյանը, «Զարթոնք» կուսակցության նախագահ, փաստաբան Արա Ջոհրաբյանը, Էջմիածին քաղաքի ավագանու «Էջմիածին» ընդդիմադիր խմբակցությունը եւ Վեհափառի աջակիցները պատրաստվում են Մայր Աթոռում միջոցառումներ իրականացնել՝ ի աջակցություն Վեհափառի:



---

Փաստաբաններն ահազանգում են՝ եթե այսպես շարունակվի, ապա կդիմեն Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Բանն այն է, որ արդեն տեւական ժամանակ է, ինչ կալանավորներին բանտից դատարան չեն կարողանում բերել: Օրերս նիստերից մեկով դատավոր Արտուշ Գաբրիելյանն էր զայրացել. «Ամեն անգամ մի պատճառաբանություն եք ներկայացնում՝ մեքենա չկա, բենզին չկա, ուղեկցող անձնակազմ չկա: Ես արդեն նախարարին պետք է զանգեմ այս հարցով: Դատական նիստը 5 րոպեից հետաձգելու եմ, ուրիշ գործով նիստ ունեմ, կալանավորին կարող եք հետ տանել»: Դատավորի դժգոհությանը միացել էին նաեւ գործով մասնակցող փաստաբաններն ու դատախազը՝ ասելով, որ համատարած այս վիճակն է: Կալանավորի ներկայությունը դատական նիստերին ապահովելը պետության պոզիտիվ պարտավորությունն է, որը չի կատարվում: Մեկ գործով ուշացումը շղթայաբար տարածվում է հաջորդների վրա, եւ խախտվում է օրվա աշխատանքային գրաֆիկը: Փաստաբանները դատարանին խնդրեցին միջնորդագիր ուղարկել ՔԿՀ: Երեկ էլ Հակակոռուպցիոն դատարանում փաստաբան Հայկ Ալումյանն ու Լիպարիտ Սիմոնյանն էին զայրացած: Պատճառը նույնն է. չկա անձնակազմ, որ կալանավորին բերեն դատարան կամ բերման ենթարկեն վկային ու բերեն դատարան: Կարճ ասած, մի կողմից ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանը դատավորներին մեղադրում է դատական նիստերը երկարաձգելու մեջ, մյուս կողմից՝ չի նպաստում, որ պետությունն իր պոզիտիվ պարտականությունները կատարի:

ԶՐՈՒՅՑ

# «ՈՂՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ ԿԱ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»

**Երեկ հայտնի դարձավ, որ ՔՊ խմբակցության ղեկավար Գուրգեն Արսենյանի գլխավորած «Միավորված աջխաղաղային կուսակցության» շենքի դիմաց ռումբ են տեղադրել: Գուրգեն Արսենյանը հայտնել էր, թե այն երկու օր առաջ է դրված եղել եւ ժամացույցով պետք է գործեր, բայց չի գործել: ՔՊ-ական ղեկավարը դիմել է ոստիկանություն՝ միջադեպը բացահայտելու: ArmLur.am-ը զրուցել է ԱԺ ղեկավար Գուրգեն Արսենյանի հետ:**

**-Պարոն Արսենյան, պարզվե՞ց՝ ովքեր են ռումբ տեղադրել ձեր կուսակցության շենքի դիմաց. ի՞նչ է պարզել ոստիկանությունը:**

-Ինձնից հասանելիքը ես արել եմ, բայց մնացած հարցերով դիմե՛ք ոստիկանություն:

**-Ի՞նչ եք կարծում, քայլն անձնապես Ձե՞զ էր ուղղված, ովքե՞ր են ցանկացել քաղաքական հաշվեհարդար տեսնել:**

-Գուրգեն Արսենյանի նկատմամբ նման քայլ անելու համար պետք է հասկանալ, որ Գուրգեն Արսենյանն այդ պահին այդտեղ չի լինում, որտեղ դա արել են: Կուսակցության շենքի դիմաց է եղել ռումբը, ոչ թե հենց Արսենյանի տան դիմաց, այսինքն՝ քաղաքական հստակ ենթատեքստ կար դրա մեջ:

**-Պարոն Արսենյան, Ձեր գնահատմամբ՝ սա մահափո՞րձ էր Ձեր դեմ:**

-Իմ գնահատականը հետեւյալն է. եթե ռումբը տրաքեր, կտուժեին տասնյակ քաղաքացիներ, քանի որ ռումբը դրսում է դրված եղել. մանկահասակ երեխաներ կային, մարդիկ, որոնք գնում են հաց առնելու, կամ մայրեր, որոնք սայլակով իրենց երեխաներին են ման տալիս: Այսինքն՝ դա Արսենյանի դեմ մահափորձ չէր, այլ լրջագույն մարդկային վտանգ ներկայացնող արարք էր:

**-Դուք Ձեր տեսադաշտում ունե՞ք մարդիկ, որ կարծում եք՝ կդիմեին նման քայլի ու կցանկանային հաշիվներ Ձեզ հետ պարզել:**

-Դա այն մարդիկ են, ովքեր համարում են, որ մենք ինչ-որ իրադարձությունների պատասխանատու ենք, ողջամտության պակաս ունեցող մարդիկ կարող են լինել, ովքեր մտածում են՝ իրենց արած-չարածի համար մենք ենք պատասխանատու: Քաղաքական պայքար է, մենք ունենք եւ՛ քաղաքական համակիրներ, եւ՛ ընդդիմադիրներ: Ես կարծում եմ, որ եթե դու քաղաքական դիրքորոշում ես հայտնում, ու քո տեսակետը չի համընկնում մյուսների հետ, նրանց ցույց ես տալիս իրենց գործողությունների դեստրուկտիվ հետեւանքները, ու դրանք իրականանում են, մարդիկ այդ ժամանակ մտածում են, որ դու ես մեղավոր իրենց արած-չարածի համար: Բնական է սա, ժամանակին համահունչ է, քանի որ այն իրադարձությունները, որոնք տեղի ունեցան անցած տարի, հետո պետք է վերլուծվեն, նկատի ունեմ՝ Ղարաբաղի անկումը: Ինձ համար վաղուց ակնհայտ էր, որ ամեն ինչ տանում է դրան, քանի որ ակնհայտ էր, ես դրա մասին ելույթներ ունենում էի, զգուշացումներ անում էի, բարձրաձայնում էի. ստացվում էր, որ մարդկանց դուրը չի գալիս իմ ասածը:

**-Պարոն Արսենյան, այսինքն՝ կարծում եք՝ Արցախի վերաբերյալ Ձեր կողմից արված քաղաքական հայտարարությունների համա՞ր են ցանկացել հաշվեհարդար տեսնել:**

-Ես նկարագրեցի քաղաքական գործընթացների վիճահարույց մասը: Կարծում եմ, որ ողջամտության խնդիր կա Հայաստանում, քանի որ երբ բարձրաձայնում ես, որ այս գործողությունների արդյունքը լինելու է սա, զգուշացնում ես՝ մի՛ արեք, հետո երբ անում են, ու տեղի է ունենում, դրա արդյունքում ունենում ենք ողբերգական իրադարձություններ. ինչ-որ մարդիկ իրենց համար որոշում են մեղավորներին, պատասխանատուներին:

*ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ*

ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐ

# ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱՑԻԱ

**Ադրբեջանի ԱԳՆ-ն արձագանքել է ֆրանսիական France 24 հեռուստաալիքին տված հարցազրույցում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտարարություններին:**

Ադրբեջանական լրատվամիջոցների կողմից հրապարակված պատասխան հայտարարության մեջ ԱԳՆ-ն Փաշինյանի խոսքերը համարում է «անհիմն մեղադրանքներ», որոնք «կանխամտածված լարվածություն են ստեղծում տարածաշրջանում եւ ուղղված են հերթական անգամ խաթարելու խաղաղ գործընթացը»:

Ինչպես պարզվեց, Բաքուն կրկնակի վիրավորված էր իր եւ «այդ տղայի» համար. «Ղեկավարների վերջին հանդիպումից հետո Հայաստանի նման հայտարարություններն արվել են Գերմանիայի կանցլերի նախաձեռնությամբ կազմակերպված հանդիպումից հետո, եւ ընտրելով Ֆրանսիան որպես դրա վայր՝ Հայաստանի կողմից Գերմանիայի ջանքերի նկատմամբ անհարգալից վերաբերմունք է, ինչը դիտարկվում է որպես խաղաղ գործընթացի վրա Ֆրանսիայի շարունակական բացասական ազդեցության ցուցանիշ»:

Բաքուն վստահեցնում է, որ «այն պնդումները, թե իբր Ադրբեջանը պատրաստվում է հարձակվել Հայաստանի վրա, չեն համապատասխանում միջազգային իրավունքի սկզբունքներին, առկա փաստերի ակնհայտ խեղաթյուրում են եւ նպատակ ունեն մոլորեցնել միջազգային հանրությանը»:

Տարօրինակ «զուգադիպությամբ» այսօր Ադրբեջանը հերթական ապատեղեկատվական արշավը սկսեց՝ Հայաստանին մեղադրելով Վարդենիսի ուղղությամբ «հրադադարը խախտելու» մեջ, որն Ադրբեջանն իր խեղաթյուրված ձեւով անվանում է «Բասարկեչարսկի»: Ինչպես հայտնի է վաղուց, Հայաստանի դեմ Ադրբեջանի ագրեսիայի յուրաքանչյուր նոր փուլը հենց տեղեկատվական նախապատրաստությամբ է սկսում:

Ադրբեջանի ԱԳՆ-ն նպատակահարմար է համարել օգտագործել այս հնարավորությունը՝ Հայաստանի Սահմանադրության դեմ պահանջներ հնչեցնելու համար. «Բոլորը քաջատեղյակ են, որ Հայաստանի Սահմանադրությամբ, գործող օրենսդրական ակտերով, պաշտոնական նամակներով ու հայտարարություններով, միջազգային կազմակերպություններում եւ դատարաններում տարածված փաստաթղթերում Ադրբեջանի տարածքային ամբողջականության դեմ պահանջների շարունակումը հաստատում է, որ Հայաստանի ղեկավարությունը շահագրգռված չէ ադրբեջանա-հայկական խաղաղության օրակարգի առաջմղման գործում: Կոչ ենք անում հայկական կողմին, որը շարունակում է ագրեսիվ զրպարտչական հռետորաբանություն կիրառել մեր երկրի դեմ՝ օգտագործելով տարբեր միջազգային հարթակներ, հրաժարվել խաղաղ հեռանկարին վնասող հայտարարություններից եւ օգտագործել ստեղծվող հնարավորությունները՝ հարավկովկասյան տարածաշրջանը վերածելու խաղաղության եւ համագործակցության տարածքի»:

Ադրբեջանի ԱԳՆ-ն, ինչպես միշտ, ոչ մի խոսք չի ասել Բաքվի մերժման մասին՝ ճանաչել Հայաստանի տարածքային ամբողջականությունը, այն մասին, որ իրենք հրաժարվում են փոխել սահմանադրությունը, ըստ որի՝ Հայաստանի ՈՂՋ տարածքը «ի սկզբանե ադրբեջանական է»:

*Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ*

## ԱՆՑՅԱԼԻ ՄՆԱՑՈՒԿՆԵՐ ԵՆ

Քաղաքագետ Ստեփան Դանիելյանը, արձագանքելով ՀԱՊԿ-ին Հայաստանի անդամության շուրջ հնչած հայտարարություններին ու դրանց հաջորդած պատասխաններին, գրում է. «Սկզբից ՀԱՊԿ-ի անդամ երկրները ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի հետ ռազմական համագործակցության ծրագրեր են սկսում, զորախաղեր են անցկացնում, թուրքական մասնակցությամբ ռազմական գործարաններ են կառուցում, թյուրքական պետությունների կոնֆեդերացիա են սկսում ձեւավորել: ՀԱՊԿ-ին չանդամակցող Ադրբեջանը այդ երկրների միջոցով ազդում է ՀԱՊԿ-ի ներքին որոշումների վրա, իսկ 2025 թվականին Թուրքիան եւ Ադրբեջանը, ըստ էության, արդեն պաշտոնապես միավորված ռազմական ուժեր են ունենալու:

Այս նախադեպից հետո ՀԱՊԿ-ի անդամ Հայաստանը նմանատիպ հարաբերություններ է ստեղծում ՆԱՏՕ-ի անդամ Ֆրանսիայի հետ:

Մյուս կողմից՝ ՆԱՏՕ-ի անդամ երկրներում կան տարբեր մոտեցումներ ռուս-ուկրաինական պատերազմի հանդեպ, մասնավորապես՝ Հունգարիան խոչընդոտում է Ուկրաինային տրամադրվող օգնություններին, այդ ճանապարհով է շարժվում Սլովակիան, իսկ ապագա ընտրություններից հետո ամրապնդվող աջերի ապագա պահվածքը դժվար է կանխատեսել: Անհասկանալի է նաեւ, թե ԱՄՆ-ն իրեն ինչպես կպահի նախագահական ընտրություններից հետո:

Եզրակացությունը մեկն է. ՀԱՊԿ, ՆԱՏՕ, ԵԱՀԿ եւ նմանատիպ կազմակերպություններն արդեն անցյալի մնացուկներ են, եւ հին գինին նոր տակառների մեջ լցնել չի ստացվում»:

## ՍԱՌԵՑՐԵԼ Է

Հայաստանը գործնականում սառեցրել է իր մասնակցությունը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության աշխատանքներին:

France 24-ին տված հարցազրույցում այս մասին հայտարարել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Ես գնահատում եմ, որ ՀԱՊԿ-ն չի կատարել անվտանգային ոլորտի պարտավորությունները Հայաստանի նկատմամբ, մասնավորապես՝ 2021 թվականին, 2022 թվականին, եւ դա չէր կարող անցնել առանց հետեւանքների: Եվ հետեւանքն էլ այն է, որ մենք գործնականում, ըստ էության, սառեցրել ենք մեր մասնակցությունը ՀԱՊԿ-ում»,- հայտարարել է Փաշինյանը:

Անդրադառնալով Հայաստանում ռուսական ռազմաբազայի վերաբերյալ հարցին՝ վարչապետն ասել է, որ ռուսական ռազմաբազան Հայաստանում է գտնվում ոչ ՀԱՊԿ-ի շրջանակներում:

«Դա բոլորովին այլ իրավապայմանագրային հարթություն է, եւ այդ հարթությանն անդրադառնալու առիթ չենք ունեցել»,- ասել է վարչապետը:

## ՉՊԵՏՔ Է ԱՆՀԱՆԳՍՏԱՑՆԻ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ Հայաստանի բանակում բարեփոխումները որեւէ մեկին չպետք է անհանգստացնեն:

Վարչապետն այս մասին ասել է France 24-ին տված հարցազրույցում:

«Ադրբեջանն ամեն անգամ մեծ աղմուկ է բարձրացնում ռազմատեխնիկական ոլորտում մեր որեւէ նոր համագործակցության պարագայում, բայց Ադրբեջանը չի ասում, որ ինքը միլիարդավոր դոլարների զենք է գնում: Եվ սա կարեւոր փաստ է արձանագրելու համար: Ինչո՞ւ է Ադրբեջանն անհանգստացած հայկական բանակի բարեփոխումներով այն պայմաններում, երբ օկուպացիայի տակ է պահում ՀՀ ինքնիշխան տարածքներ, եւ այն պայմաններում, երբ մենք ասում ենք՝ եկեք Ալմաթիի հռչակագրի հիման վրա սահմանն արտահայտենք գետնի վրա եւ այդ սահմանի գծից զորքերը հայելային հետ քաշենք, եւ դա կլինի փոխադարձ վստահության շատ կարեւոր քայլ: Մեր բանակի բարեփոխումը որեւէ մեկին չպետք է անհանգստացնեն»,- ասել է վարչապետը:

## ԲԱՆԱՁԵՎԸ ԿՔՆՆԱՐԿՎԻ

Եվրոպական խորհրդարանում հաջորդ շաբաթ բանաձեւ կքննարկվի Հայաստանի հետ վիզաների ազատականացման վերաբերյալ:

Այս մասին հայտնել է Եվրոպական խորհրդարանի գերմանացի պատգամավոր Վիոլա Ֆոն Քրամոնը:

Նա հայտնել է, որ բանաձեւը կքննարկվի հաջորդ շաբաթ՝ Եվրոպական խորհրդարանի լիագումար նիստի ընթացքում:

«Մենք բանաձեւով առաջ ենք քաշում իրական վիզային գործողությունների ծրագիր, մենք առաջ ենք մղելու Հայաստանի հետ ինստիտուցիոնալ եւ այլ կապերը սերտացնելու օրակարգը, որպեսզի Հայաստանի բնակիչներն էլ զգան, որ իրենք ողջունվում են: Մենք իսկապես կցանկանայինք Հայաստանին ինչ-որ պահի տեսնել Եվրամիության մաս: Այսպիսով, եթե գոնե առաջ գնանք մուտքի արտոնագրերի կամ ազատականացման գործողությունների ծրագրով, սա շոշափելի բան կլինի մարդկանց համար, ինչպես նաեւ առեւտրի եւ մեր շուկաների ազատականացման առումով»,- նշել է Եվրախորհրդարանի պատգամավորը:

Հարցին, թե արդյոք խոչընդոտներ կան, որպեսզի Եվրամիությունը Հայաստանի հետ երկխոսություն սկսի վիզաների ազատականացման շուրջ, պատգամավորը պատասխանել է, որ Եվրախորհրդարանը չէ, որ կարող է արգելափակել կամ մինչ այժմ արգելափակել է այդ գործընթացը: Նա մանրամասնել է, որ այդ խնդիրը միշտ եղել է Եվրոպական խորհրդում:

Վիոլա Ֆոն Քրամոնն ասել է, որ Հայաստանի դիվանագետները պետք է այդ հարցով որոշակի աշխատանքներ տանեն ԵՄ անդամ որոշ երկրների հետ՝ չհստակեցնելով, թե խոսքը հատկապես որ երկրների մասին է:

Նա նշել է, որ ԵՄ անդամ որոշ երկրներում արմատացած մտահոգություններ կան Հայաստանի հետ վիզաների ազատականացման հարցում:

ՀՀ-ՖՐԱՆՍԻԱ

# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

**Հայաստանի եւ Ֆրանսիայի միջպետական հարաբերություններում իր կարեւոր դերակատարումն ունի պաշտպանության ոլորտում համագործակցությունը. այս մասին հայտարարեց Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը Ֆրանսիայի զինված ուժերի նախարար Սեբաստիեն Լեկորնյուի հետ համատեղ ասուլիսի ժամանակ:**

«Մեզ համար մեծ պատիվ է պատմության ընթացքում առաջին անգամ Հայաստանում հյուրընկալել բարեկամ Ֆրանսիայի զինված ուժերի նախարարին: Հայ եւ ֆրանսիացի ժողովուրդների ընդհանուր արժեքների վրա հիմնված միջպետական հարաբերությունների շրջանակները մեր պետությունների ղեկավարների՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, նախագահ Էմանուել Մակրոնի առաջնահերթ ուշադրության ներքո օրըստօրե ընդլայնվում են, որոնցում իր կարեւոր դերակատարումն ունի պաշտպանության ոլորտում համագործակցությունը:

Ֆրանսիայի զինված ուժերի նախարարի այցը վկայությունն է մի բանի, որ թեեւ Հայաստանի եւ Ֆրանսիայի միջեւ ռազմական համագործակցության գործնական փուլը երկու տարին չի բոլորել, մեր համատեղ ջանքերի շնորհիվ այն արդեն իսկ համակարգային եւ հեռահար բնույթ ունի»,- նշեց Պապիկյանը:

Օգտվելով առիթից՝ Հայաստանի պաշտպանության նախարարը շնորհակալություն հայտնեց ֆրանսիացի գործընկերներին եւ պարոն Լեկորնյուին՝ համագործակցության զարգացման գործում ցուցաբերվող պատրաստակամության եւ անձնական ներդրման համար:

«Հայաստանի եւ Ֆրանսիայի միջեւ ռազմական համագործակցության օրակարգն ընդգրկում է զինված ուժերի կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտները»,- հայտարարեց Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը:

Նախարարը նշեց, որ Ֆրանսիայի զինված ուժերի նախարարի հետ քննարկումները անցան բովանդակային եւ գործնական մթնոլորտում:

«Մեր համագործակցության օրակարգն ընդգրկում է զինված ուժերի կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտները: Հատկապես պետք է ընդգծեմ պաշտպանական բարեփոխումների ուղղությամբ համակողմանի խորհրդատվական աջակցությունը, ռազմական կրթության ոլորտը, լայն թափով զարգացող վարժանքների ուղղությունը եւ, իհարկե, զինված ուժերի պաշտպանական միջոցների արդիականացման եւ ռազմատեխնիկական համագործակցության զարգացման գործընթացը:

Տեղեկացնեմ, որ երկկողմ համագործակցությունն այս տարվանից դրվել է հստակ պլանավորման հիմքի վրա եւ զարգանում է մեկ տասնյակից ավելի ուղղություններով»,- ասաց Պապիկյանը:

Նախարարի խոսքով՝ քննարկումների ընթացքում Լեկորնյուին ներկայացրել է նաեւ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի բարեփոխումների ընթացքը, որոնց կոչված են ձեւավորելու ժամանակակից չափորոշիչներին համապատասխան եւ արդի մարտահրավերներին դիմակայելու կարող զինված ուժեր:

«Հայաստանի Հանրապետությունը նպատակ է դրել նորացնել եւ արդիականացնել սեփական զինված ուժերի կարողությունները»,- հայտարարեց Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը:

«Սա ենթադրում է, որ մենք ունենք եւ՛ սեփական միջոցներով այդ կարիքները համալրելու անհրաժեշտություն եւ՛, իհարկե, գործընկեր երկրների աջակցությունը մեզ միայն կօգներ: Մեր մոտեցումը հետեւյալն է. Հայաստանի Հանրապետությունը զենք-զինամթերք գնում է սեփական տարածքային ամբողջականությունը եւ սուվերենությունը պաշտպանելու նպատակով: Հայաստանի Հանրապետության կողմից գնվող զենք-զինամթերքը ուղղված չէ որեւէ երկրի նկատմամբ ագրեսիայի: Իհարկե, չեմ կարող հերքել, որ կա վտանգ, եւ այդ վտանգը տեսանելի է առկա հռետորաբանությունից, եւ մեր պարտավորությունն է պաշտպանել երկրի տարածքային ամբողջականությունը եւ սուվերենությունը:

Եվ, անկախ նրանից, թե առաջիկայում խաղաղության պայմանագիր կնքելուց հետո ինչ անվտանգային միջավայր կունենանք, Հայաստանի Հանրապետության զինված ուժերը շարունակելու են պաշտպանական զենք-զինամթերքի գնումը»,- ասաց Պապիկյանը:

*ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

ՀՀ-ԱԴՐԲԵՋԱՆ

# ՈՐԵՎԷ ՁԵՎՈՎ ԱՐԴԱՐԱՑՎԱԾ ՉԷ

**Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ Ադրբեջանի կողմից Հայաստանի վրա հարձակումը շատ հավանական է:**

Փաշինյանն այդ մասին ասել է France 24-ին տված հարցազրույցում:

«Վերլուծելով պաշտոնական Բաքվից հնչող հայտարարությունները՝ գալիս ենք եզրակացության, որ, այո, հարձակումը Հայաստանի վրա շատ հավանական է: Ինչո՞ւ. որովհետեւ, օրինակ, պաշտոնական Բաքվից շատ հաճախ հնչում են «Արեւմտյան Ադրբեջանի» վերաբերյալ հայտարարություններ: Ըստ էության, Ադրբեջանն «Արեւմտյան Ադրբեջան» անվանում է Հայաստանի Հանրապետությունը իր ամբողջ տարածքով՝ նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության տարածքների մեծ մասն ադրբեջանական են: Դիվանագիտական մակարդակում Ադրբեջանը հավաստիացնում է, որ հարձակման ոչ մի մտադրություն չունի, բայց որտեղի՞ց են գալիս այդ տեսակետները հարձակման հավանականության մասին:

Առաջինը, որ արդեն իսկ հրապարակային պայմանավորված սկզբունքները խաղաղության պայմանագրի տեքստի մեջ արտահայտելիս մենք տեսնում ենք Ադրբեջանի կողմից որոշակի հարուցվող դժվարությունները: Երկրորդը՝ ամենաբարձր մակարդակով հնչող հրապարակային խոսույթն է, որը, եթե կարճ ներկայացնեմ, Հայաստանի Հանրապետությունն «Արեւմտյան Ադրբեջան» անվանելու մեջ է արտահայտվում: Երրորդը՝ ագրեսիվությունն է սահմանին: Օրինակ՝ վերջին միջադեպը, երբ մենք 4 զոհ ունեցանք. այդ միջադեպը որեւէ ձեւով արդարացված չէ: Նրանք հայտարարել էին, որ իրենց զինվորներից մեկը վիրավոր է, մենք էլ հայտարարեցինք, որ հետաքննություն կիրականացնենք, որովհետեւ կա հրաման չարդարացված ձեւով որեւէ գործողություն չիրականացնել, եւ եթե պարզվի, որ կա այդ հրամանի խախտում, կլինեն նաեւ օրենքով նախատեսված հետեւանքներ: Չնայած այս հայտարարություններին՝ Ադրբեջանն այդ առիթն օգտագործեց, որպեսզի ագրեսիվություն ցուցաբերի: Այս փաստերի համախումբն է, որ բերում է շատ հայաստանյան եւ միջազգային փորձագետների, որ Ադրբեջանը նոր հարձակում է պատրաստում Հայաստանի վրա»,- ասել է Փաշինյանը:

*Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ*

ՔՐԵԱԿԱՆ

# ԻՆՉՈ՞Ւ ԷԻՆ ՓՈՐՁՈՒՄ ՄՈԼՈՐԵՑՆԵԼ

**SHAMSHYAN.com-ը փետրվարի 21-ին լուր եւ ֆոտոռեպորտաժ էր հրապարակել՝ Տավուշի մարզում տեղի ունեցած խոշոր ավտովթարի մասին:**

Այդ օրը՝ ժամը 01:40-ի սահմաններում, «Nissan Teana» մակնիշի ավտոմեքենան Ազատամուտ բնակավայրի վարչական տարածքում վթարի էր ենթարկվել, ինչի հետեւանքով 3 հոգի տեղափոխվել էին «Իջեւան» բժշկական կենտրոն:

Նույն օրը դեպքի վայր ժամանած ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Իջեւանի բաժնի հերթապահ խմբին վիրավորները հայտնել էին, որ վարորդը եղել է Տավուշի մարզի բնակիչ 28-ամյա Մարտին Մ.-ն, եւ այդ ամենը ոստիկանները հիմք էին ընդունել ու կազմել էին փաստաթղթեր եւ այն փոխանցել էին Հայաստանի քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչություն:

Արդեն քննչական վարչությունում ավագ քննիչ Գ. Խաչատրյանի գրագետ, պրոֆեսիոնալ աշխատանքի արդյունքում պարզվեց, որ վիրավորների հայտնած տեղեկությունները Մարտին Մ.-ի վերաբերյալ իրականության հետ կապ չունեն:

Մարտին Մ.-ն եղել է ավտոմեքենայի ուղեւոր եւ գտնվել է ավտոմեքենայի հետեւի նստատեղին:

Ավտոմեքենայում են եղել նաեւ Տավուշի մարզի բնակիչներ 24-ամյա Խաչիկ Գ.-ն եւ 32-ամյա Գոռ Խ.-ն:

Քննիչի ճիշտ գործողությունների արդյունքում պարզվել է նաեւ, որ ավտոմեքենայում եղել է նաեւ Իվան Բ.-ն:

Քննիչի շնորհիվ նաեւ բացահայտվել էր, որ ավտոմեքենան վարել է ոչ թե Մարտին Մ.-ն, ինչպես ասել էին ավտոմեքենայում գտնվող վիրավորները, այլ այն վարել է Գոռ Խ.-ն, ով փաստերի ճնշման տակ քննիչի մոտ խոստովանել է, որ ինքն է ավտոմեքենան վարել:

Իսկ թե ինչու էին հիվանդանոցում վիրավորները փորձում մոլորեցնել ոստիկաններին, դա արդեն նրանց խղճին է:

Նաեւ քննչական բաժինը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ ենթադրյալ հանցանքով Մարտին Մ.-ին պատճառվել է վնաս, ուստի ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 26-րդ կետով, 41-րդ, 50-րդ եւ 148-րդ հոդվածների պահանջներով՝ քննիչը որոշել է քննվող քրեական վարույթով Մարտին Մ.-ին ճանաչել տուժող:

Ինչպես ավելի վաղ հայտնել էր ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, փետրվարի 21-ին ավտովթար էր տեղի ունեցել Տավուշի մարզում: Ժամը 01:40-ի սահմաններում «Nissan Teana» մակնիշի ավտոմեքենան Ազատամուտ բնակավայրի վարչական տարածքում դեռեւս անհայտ հանգամանքներում դուրս էր եկել երթեւեկելի գոտուց, բախվել ճամփեզրի ծառերին եւ հայտնվել դաշտում:

Վթարի հետեւանքով Տավուշի մարզի բնակիչներ 28-ամյա Մարտին Մ-ն, 24-ամյա Խաչիկ Գ-ն եւ 32-ամյա Գոռ Խ-ն մարմնական վնասվածքներով տեղափոխվել էին «Իջեւան» բժշկական կենտրոն:

Դեպքի վայր էին ժամանել ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Տավուշի մարզային վարչության պետ Արթուր Մկրտչյանը, ոստիկանության Իջեւանի բաժնի պետ Եփրեմ Գալստյանը եւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Տավուշի մարզի գումարտակի հրամանատար Լեւոն Մարտիրոսյանը:

Վթարի մասին ոստիկանության Իջեւանի բաժնից տեղեկությունը փոխանցել էին Հայաստանի քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչություն, որտեղից ժամանել էր քննչական խումբը՝ օրվա պատասխանատու հերթապահ քննիչի գլխավորությամբ:

Վթարի փաստով քննչական վարչությունում նախաձեռնվել էր քրեական վարույթ: Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿԱՆ*

ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆ

## ԲԱԶՄԱԴՐՎԱԳ ՎԱՐՈՒՅԹ

Ավարտվել է Երեւանի 37-ամյա բնակչի կողմից շուրջ 40 միլիոն ՀՀ դրամի համակարգչային հափշտակություն կատարելու դեպքերի առթիվ նախաձեռնված բազմադրվագ քրեական վարույթի նախաքննությունը: Այս մասին տեղեկացնում են ՀՀ ՔԿ-ից:

«ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության կիբեռհանցագործությունների եւ բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարված հանցագործությունների քննության վարչությունում իրականացված բազմակողմանի քննությամբ պարզվել եւ հիմնավորվել է, որ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կալանավոր, 37-ամյա տղամարդը հանցավոր ճանապարհով ֆինանսական միջոցներ ձեռք բերելու նպատակով 2021թ. հունիսից մինչեւ 2022թ. ապրիլն ընկած ժամանակահատվածում, հասանելիություն ստանալով շուրջ 5 տասնյակ քաղաքացու «Իդրամ» դրամապանակներին, կատարել է ընդհանուր 39.803.498 ՀՀ դրամ գումարի համակարգչային հափշտակություն:

Մասնավորապես, նա Viber, WhatsApp հավելվածներով զանգահարել է տարբեր անձանց եւ տարբեր պատրվակներով, այդ թվում՝ հայտնելով, թե իբր սխալմամբ գումար է փոխանցել նրանց «Իդրամ» դրամապանակներին, խնդրել է տրամադրել իրենց հեռախոսահամարներին ստացված գաղտնաբառերը: Քաղաքացիների կողմից այդ տվյալներն իրեն տրամադրվելուց հետո նա հասանելիություն է ստացել նշված անձանց «Իդրամ» էլեկտրոնային դրամապանակներին եւ դրանց միջոցով համակարգչային տվյալն առանց օրենքով կամ պայմանագրով կամ իրավաչափ այլ հիմքով նախատեսված թույլտվության մուտքագրելով, վերջիններիս անվամբ առցանց եղանակով կնքել է վարկային պայմանագրեր:

Դրանցով հաստատված եւ իր կողմից փաստացի կառավարվող էլեկտրոնային դրամապանակներ մուտքագրված, «Իդրամ» դրամապանակներին կցված բանկային քարտերին եւ դրամապանակներում առկա գումարից տղամարդը կատարել է ընդհանուր 39.803.498 ՀՀ դրամ գումարի համակարգչային հափշտակություն՝ գումարները փոխանցելով իր կողմից օգտագործվող տարբեր բուքմեյքերական ընկերությունների խաղային հաշիվներին:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ 37-ամյա տղամարդուն մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 257-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով:

Նախաքննության փուլում քաղաքացիներին պատճառված վնասից վերականգնվել է ավելի քան 15 մլն դրամը:

Նախաքննությունն ավարտվել է: Քրեական վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկող դատախազին՝ հաստատելու եւ դատարան ուղարկելու համար:

ՀՀ քննչական կոմիտեն քաղաքացիներին հորդորում է նմանատիպ հանցագործությունների զոհ չդառնալու համար որեւէ դեպքում անձնական, բանկային տվյալները, հատկապես գաղտնաբառերը չտրամադրել անծանոթ անձանց՝ անկախ պատճառաբանություններից»,- ասված է հաղորդագրությունում:

ԱՊՕՐԻՆԻ ԶԵՆՔ

# ԿԱՐԵԼԻ Է ԳՈՒՄԱՐՏԱԿ ՁԻՆԵԼ

**ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի պարեկները վերջին ամիսներին այնքան շատ զենք, զինամթերք են հայտնաբերել, որով կարելի է զինել մի ամբողջ գումարտակ:**

ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության պետ, ոստիկանության գնդապետ Արթուր Խուդինյանի անմիջական հսկողության տակ են գտնվում ՀՀ ՆԳ նախարար Վահե Ղազարյանի եւ ՆԳՆ ոստիկանության պետ, ոստիկանության գեներալ-մայոր Արամ Հովհաննիսյանի խիստ հանձնարարականները, որ պարեկային ծառայությունը նույնպես պետք է ակտիվ պայքար տանի ապօրինի զենք-զինամթերքի հայտնաբերման ուղղությամբ: Գրեթե ամեն օր Երեւանի գնդի պարեկները տարբեր տեսակի հանցատեսակներ են բացահայտում: Հայտնաբերում են մեծ թվով թմրամիջոցներ, զենք-զինամթերք, պայթուցիկ նյութեր, առեւանգված ավտոմեքենաներ եւ այլ տեսակի հանցագործություններ:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, փետրվարի 20-ին ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 4-րդ գումարտակի 1-ին վաշտի պարեկներ Խաչիկ Հովհաննիսյանն ու Լեւոն Բաղդասարյանը գիշերը՝ ժամը 04:00-ի սահմաններում, օպերատիվ տեղեկություններ են ստանում, որ Բաշինջաղյան փողոցով ընթացող «Mitsubihsi» մակնիշի ավտոմեքենայում, հնարավոր է, զենքի լինի:

Պարեկները կարճ ժամանակում նշված փողոցի 4-րդ շենքի մոտ հայտնաբերում են ենթադրյալ «Mitsubihsi»-ն, ու պարզվում է, որ ՊԾ Երեւան քաղաքի գնդում ստացված օպերատիվ տեղեկությունները հավաստի էին:

Ավտոմեքենայում գտնվող Երեւանի բնակիչներ 23-ամյա Սամվել Մ.-ն եւ 23-ամյա Հմայակ Դ.-ն ապօրինի զենք-զինամթերք պահելու հիմնավոր կասկածանքով տեղափոխվում են ոստիկանության Մաշտոցի բաժին:

Ոստիկանություն է տեղափոխվում նաեւ Հմայակ Դ.-ի վարած «Mitsubishi» մակնիշի ավտոմեքենան:

Արդեն ոստիկանությունում նրանք հայտնում են, որ ավտոմեքենայում ատրճանակ կա: Դեպքի փաստով ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ եւ Դավիթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում նախաձեռնվում է քրեական վարույթ, ավտոմեքենայում էլ հայտնաբերվում է «Մակարով» տեսակի ատրճանակ:

Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

*Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ*

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 22-ից 23-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 72 դեպք, որից 2-ը՝ նախկինում կատարված:*

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

## ՀՆԱՄԵՆԻ ՎԱՆՔԵՐԸ՝ ԱՆՏԵՐ

Լոռու մարզի Ամրակից գյուղում գտնվող ռուսական Սուրբ Նիկոլայ Հրաշագործ եկեղեցու վերանորոգման համար կառավարությունը մրցույթ է հայտարարել; Ծրագրի արժեքը կազմում է 175 միլիոն դրամ: 19-րդ դարում կառուցված ռուսական եկեղեցին ճարտարապետական մեծ արժեք չի ներկայացնում: Այդ եկեղեցին կարող էր նորոգվել Ռուսաստանում հայ մեծահարուստների՝ Սամվել Կարապետյանի, Արա Աբրահամյանի եւ այլոց ֆինանսավորմամբ, իսկ ՀՀ պետական բյուջեի գումարները պետք էր ուղղել քանդվող հնամենի հայկական վանքերի նորոգմանը: Տավուշի մարզի անտառներում գտնվող հնամենի վանքերը՝ Կիրանցը, Առաքելոցը, Ջուխտակ վանքը, Սրվեղի վանքը , Դեղձնուտ, Մշկավանքը եւ այլ հին վանքեր ժամանակի ընթացքում քանդվում են, դրանց նորոգման համար տասնամյակներ շարունակ պետական բյուջեից ֆինանսավորում չի իրականացվում:

## ԳՐԱԴԱՐԱՆԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Դիլիջանի քաղաքային գրադարանը տեղակայված էր մշակույթի պալատի վերջին հարկում, տանիքի անձրեւաջրերն ու ձյան հալոցի ջրերը թափվում էին գրքերի վրա, անձրեւաջրերը լցվում էին գրադարանի մի հատվածը: Գրադարանի աշխատողները գրքերը ջրերից պաշտպանելու համար ծածկում էի պոլիէթիլենային տոպրակներով, ձմռանը խոնավ գրքերը չորացնում էին վառարանների մոտ, իսկ ամռանը՝ օդափոխում: Դիլիջանի մշակույթի պալատը մեկուկես տարի վերանորոգման մեջ է, գրադարանի գրքերը, պարկերի մեջ լցված, գտնվում են մշակույթի պալատի առաջին հարկում գտնվող դահլիճում: Գրադարանի 13 աշխատողները 17 ամիս հարկադիր պարապուրդի մեջ են , որի համար աշխատավարձի 2/3 մասն են ստանում: Մշակույթի պալատը վերանորոգում է «Արտդիանշին» ՍՊԸ-ն:

## ՉԵՆ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՒՄ

2023թվականին Տավուշի մարզպետարանի պաշտոնյաները պետական բյուջեից 71 միլիոն 960 հազար դրամ պարգեւավճար են ստացել: Մարզպետարանի աշխատողների պարգեւատրումների վերաբերյալ մարզպետի որոշումները Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքում չեն հրապարակվում: Մարզպետարանը դա պատճառաբանում է այսպես. «Պարգեւատրումների վերաբերյալ որոշումները չեն հրապարակվում, քանի որ դրանք պարունակում են աշխատողներին վերաբերող անձնական տվյալներ՝ նրանց եկամուտների մասին»: Իրականում Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը պետբյուջեից իրեն եւ մարզպետարանի աշխատողներին պարգեւատրելու մասին իր որոշումները մարզպետարանի ինտերնետային կայքում չի հրապարակում, որովհետեւ սահմանամերձ, աղքատ մարզում պետբյուջեից մարզպետարանի պաշտոնյաների ճոխ պարգեւատրումների մասին տեղեկատվությունը հանրության կողմից վատ է ընդունվում:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ԾՐԱԳԻՐ

# «ՎՈՐՔԱՈՒԹ»-ՆԵՐ՝ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

**Հայաստանի Հանրապետության կառավարության փետրվարի 23-ի նիստում ԿԳՄՍ նախարարությանը 2024 թվականի պետական բյուջեով կապիտալ ծրագրերի իրականացման համար նախատեսված եւ օբյեկտներով չբաշխված գումարներից կատարվել է վերաբաշխում՝ 638 մլն 444 հազար դրամ գումարի չափով:**

Նախագիծը ներկայացրել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը՝ ընդգծելով, որ այն ուղղված է Կառավարության երկու ռազմավարական ծրագրերի իրականացմանը՝ «Կրթության զարգացման՝ մինչեւ 2030 թվականը պետական ծրագրի» եւ Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի 2023-2030 թվականների զարգացման ռազմավարությանը:

Ըստ նախարարի՝ գումարը կուղղվի 5 մանկապարտեզի եւ 2 մարզադպրոցի, ինչպես նաեւ 10 «Վորքաութ» տեսակի մարզահրապարակների նախագծման, կառուցման եւ վերակառուցման աշխատանքներին:

Ժաննա Անդրեասյանը հիշեցրել է՝ ՀՀ կառավարության «500 մանկապարտեզի կառուցում/վերակառուցում/հիմնանորոգում» ծրագրի շրջանակում ընտրվել է 450 հաստատություն, որոնցից 139-ում արդեն ավարտվել են շինարարական աշխատանքները: Ընտրված մանկապարտեզներից 12-ի շինարարությունը նախատեսված է իրականացնել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Սոցիալական ներդրումների եւ տեղական զարգացման» վարկային ծրագրի շրջանակում:

«Հաշվի առնելով վերջին տարիներին ֆինանսական շուկայում տեղի ունեցող փոփոխությունները՝ 5 մանկապարտեզի մասով վարկային միջոցները լրացնելու կարիք կա, եւ պետական բյուջեից հավելյալ հատկացումներ են արվում, այդ թվում՝ 2 մարզադպրոցի կառուցման ուղղությամբ»,- նշել է նախարարը:

Ըստ այդմ՝ 461.4 մլն դրամ կհատկացվի Խոյ համայնքի Ծաղկունք բնակավայրի, Անի համայնքի Քարաբերդ եւ Մարալիկ բնակավայրերի մանկապարտեզների նախագծման, Արաքս համայնքի Ակնաշեն բնակավայրի մանկապարտեզի կառուցման եւ Աշտարակ համայնքի Ուշի բնակավայրի մանկապարտեզի վերակառուցման աշխատանքներին:

173.6 մլն դրամ կհատկացվի Արմավիր համայնքի Մյասնիկյան բնակավայրի մարզադպրոցի նախագծման եւ Փարաքար համայնքի Փարաքար բնակավայրի մարզադպրոցի շինարարության համար:

4,6 մլն դրամ կուղղվի Գեղարքունիքի մարզի Ճամբարակ, Տավուշի մարզի Բերդ, Վայոց ձորի մարզի Ջերմուկ եւ Սյունիքի մարզի Կապան քաղաքներում 10 «Վորքաութ» տեսակի մարզահրապարակների նախագծման աշխատանքներին: Որոշմամբ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին են փոխանցվել 23 դպրոցի եւ 11 կրթահամալիրի կառուցման աշխատանքների պատվիրատու մարմնի լիազորությունները: Ավելացվել են նաեւ 7 դպրոցի կառուցման համար նախատեսված 1-ին եռամյակի գումարները՝հաշվի առնելով կնքված եւ կնքվող պայմանագրերով նախատեսված կանխավճարների չափերը:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, անդրադառնալով «Վորքաութ» տեսակի մարզահրապարակների նախագծման աշխատանքներին, նշել է, որ աշխարհում մեծ թափով զարգանում եւ տարածվում է Սթրիթ վորքաութ տեսակի մարզաձեւը. «Սա, ըստ էության, մարզումային համակարգ է, որը գործում է ոչ թե ֆիթնես կենտրոններում եւ մարզասրահներում, այլ ուղղակի փողոցներում: Մեր վերլուծությունները ցույց են տալիս, որ նաեւ փողոցում նման ենթակառուցվածքների գոյությունը լավ միջոց է պատանիներին եւ երիտասարդներին քրեածին դրսեւորումներից հետ պահելու եւ նրանց էներգիան այլ ուղղությամբ զարգացնելու տեսանկյունից»,- նշել է ՀՀ վարչապետը՝ ընդգծելով, որ հստակ մեխանիզմներ եւ պրոֆեսիոնալ աջակցություն է պետք, որպեսզի մարդիկ օգտագործեն այդ ենթակառուցվածքները: Նիկոլ Փաշինյանը նաեւ կարեւորել է ՏԻՄ-երի կողմից այդ ենթակառուցվածքների հետագա սպասարկման անհրաժեշտությունը:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը տեղեկացրել է, որ «Սթրիթ վորքաութ» ֆեդերացիայի հետ իրականացվել են քննարկումներ՝մարզումներին աջակցելու եւ համատեղ աշխատելու տեսանկյունից: Ըստ նախարարի՝ տարածքներն ընտրվել են այն տրամաբանությամբ, որ դրանք գտնվեն կամ շենքերի բակային տարածքներում, որը կարեւոր է պատանիների ֆիզիկական ակտիվության եւ առողջ ապրելակերպի խթանման տեսանկյունից, կամ դպրոցամերձ տարածքներում ֆիզկուլտուրայի դասերի ընթացքում օգտագործվելու նպատակով: Ժաննա Անդրեասյանը շեշտել է՝ մարզահրապարակները լինելու են ներառական եւ հնարավորություն են ընձեռելու այնտեղ մարզվելու նաեւ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց:Նախարարն ընդգծել է նաեւ խաղահրապարակների՝ ըստ մարզերի տարածքային բաշխվածության հարցը:

*ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ*

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԵՏԱՁԻ

# ՕՏԱՐ ՉԷ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

**Սան Անտոնիո կենդանաբանական այգուց (Տեխաս) Տիմոթեոս գետաձին օտար չէ քաղաքականությանը: Նա առաջին անգամ առաջադրվել է ԱՄՆ նախագահական ընտրություններում 2020 թվականին: Կենդանիները սոցիալական ցանցերում հաշիվներ են ստեղծել, որոնց հետեւել է մի քանի հազար մարդ: Այնտեղ գետաձին դժգոհել է, որ իրեն չեն հրավիրել բանավեճի, եւ շնորհավորել է իր հաղթական հակառակորդ Ջո Բայդենին:**

Այս մասին քննարկվում է թեկնածուի Facebook-ի էջում: Օրերս կենդանաբանական այգում կրկին տեղի ունեցավ Թիմոթիի նախագահի թեկնածու առաջադրման արարողությունը: Դրա համար հավաքվել էին մի քանի տասնյակ երկրպագուներ ու լրագրողներ: Այցելուներն ակտիվորեն ապրանքներ են գնում քաղաքական գետաձիու հետ:

«Ամերիկայի ապագայի վերաբերյալ Թիմոթիի տեսլականի հիմքում ընկած է նրա «շատ ուժեղ» հարթակը, որն ընդգծում է յուրաքանչյուր քաղաքացու՝ օրական գոնե մեկ երիտասարդացնող քնելու կարեւորությունը իր «Քուն բոլորի համար» նախաձեռնության միջոցով»: Նա նաեւ հանդես է գալիս դպրոցներում եւ գրասենյակներում պարտադիր խորտիկների օգտին՝ արտադրողականությունն ու երջանկությունը բարձրացնելու համար: Բացի այդ, Թիմոթին կրքոտ է մարդկանց մեջ բարություն եւ հարգանք քարոզելու եւ բոլոր արարածների՝ մեծի ու փոքրի բարօրությունը պաշտպանելու համար», - ասել է քաղաքական բեհեմոթն իր նախընտրական ծրագրում: Առաջադրվելուց հետո թեկնածուն իր առաջին գրառումն է հրապարակել Facebook-ում, որտեղ աջակիցներին հարցրել է, թե հաղթանակի դեպքում որը պետք է լինի իր պաշտոնավարման առաջին հրամանագիրը:

*Ն. ԱՂԱՍՅԱՆ*

*● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 7 պատահար. 9 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԿԱՆԱՆՑ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ոստիկանությունում կանայք եւ տղամարդիկ հավասարապես ներկայացված կլինեն, որը էական նախապայման կլինի անձնակազմի ծառայողական եւ կատարողական կարգապահության բարձրացման համար:

Այս մասին «Կանանց ներգրավվածությունը ՆԳՆ հենասյունային կարեւոր բաղադրիչ» համաժողովի ողջույնի խոսքում նշեց ՀՀ ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանը՝ ընդգծելով, որ համաժողովի գաղափարը եղել է դեռեւս նախորդ տարվանից, երբ սկսել են քննարկել իրավապահ համակարգում կանանց ներգրավվածության շուրջ ստեղծված հարցերը, խնդիրներն ու դրանց լուծումները:

«Ներքին գործերի համակարգում ընթացող ծավալուն բարեփոխումների համար հիմնարար է ներառականության սկզբունքը, այսինքն՝ հնարավորինս բաց լինել հասարակության համար, ինչպես հանրային կարծիքն ու որոշումը չափորոշիչ ունենալու, այնպես էլ համակարգի կադրային բազան համալրելու եւ թարմացնելու առումով: Իմ խորին համոզմամբ՝ կադրային բնագավառում սկզբունքորեն կարեւոր է կանանց առավելագույն ներգրավվումը: Համակարգում կանանց ներգրավվածության ընդլայնումը պայմանավորված է ոչ միայն կանանց եւ տղամարդկանց հավասար ներկայացվածության ապահովմամբ, այլեւ էական նախապայման է անձնակազմի ծառայողական եւ կատարողական կարգապահության բարձրացման համար»,-ասաց նախարարը:

Նախարար Ղազարյանը համոզված է, որ կին ծառայողները ոչ միայն շարունակելու են իրենց ծանրակշիռ ներդրումը բերել այդ գործին, այլեւ ավելի ու ավելի են ընդլայնելու իրենց ներգրավվածությունն ու ներկայացվածությունն աշխատանքի բոլոր ոլորտներում՝ կոտրելով կարծրատիպեր:

ԵՄ դեսպան, Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար Վասիլիս Մարագոսն ընդգծեց ու կարեւորեց այն, որ այսօր արդեն իսկ բավականին մեծ է ՆԳՆ-ում ներգրավված կանանց թիվը:

«Կանայք եզակի տեսակետներ, հմտություններ եւ ուժեղ կողմեր են բերում ոլորտ, որոնք լրացնում եւ մեծացնում են ցանկացած ոստիկանական ուժի կարողությունը: Կանանց ներկայությունը ոստիկանությունում խթանում է համայնքային անվտանգության ավելի համապարփակ մոտեցումը բազմապիսի հարցերի ընկալումը, որոնց բախվում են քաղաքացիները: Բացի դրանից, այն նաեւ մեր հասարակությանը տալիս է մեկ այլ քաղաքակրթական տեսակետ՝ լինել ժամանակակից եւ եվրոպական տարածքում ընդգրկված մաս»,-ասաց դեսպանը: Անդրադառնալով բարեփոխումներին՝ Վասիլիս Մարագոսը նշեց, որ աջակցելով բարեփոխումների ծրագրին՝ նպատակ են ունեցել խթանելու գենդերային հավասարությունը եւ կանանց ներգրավվածությունը ոստիկանության ոլորտում: «Իսկ այսօրվա քննարկմանը մի շարք կարեւոր հարցերից զատ, շատ կարեւոր է քննարկել մարտահրավերները՝ հասկանալու համար, թե որոնք են խոչընդոտները եւ արգելքները, որոնք մինչ այս պահը խանգարել են եւ դեռեւս կարող են խանգարել կանանց՝ ոստիկանական ուժերում լիարժեք ներգրավվելուն»,-ասաց նա:

ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Քրիստինա Քվինը, ողջունելով ներկաներին, կարեւորեց նմանատիպ միջոցառումների դերը՝ ոլորտում խնդիրների բարձրացման, քննարկման եւ լուծումների առաջարկման տեսակետից:

ԷԿՈԼՈԳԻԱՊԵՍ ԱՆՎՏԱՆԳ

# ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳ

**Հայաստանի համար արդիական են վտանգավոր թափոնների էկոլոգիապես անվտանգ գործածության հիմնախնդիրները: Դեռեւս լուծված չեն այդ թափոնների էկոլոգիապես անվտանգ եղանակով հեռացման, վնասազերծման, վերամշակման, օգտահանման եւ ոչնչացման հարցերը: Նշված հիմնախնդիրների լուծումը պահանջում է նոր մոտեցումների կիրառում: Այս համատեքստում շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրատեսակների համար ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը նախատեսում է ներդնել արտադրողի, ներմուծողի պատասխանատվության ընդլայնման համակարգ: ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ռազմավարական քաղաքականության վարչության պետ Լուսինե Ավետիսյանը տեղեկացրեց, որ խոսքը թափոնների կառավարման նոր համակարգի մասին է:**

«Նոր համակարգի ներդրմամբ արտադրողը կամ ներմուծողը պատասխանատվություն է կրելու ապրանքի ամբողջ շղթայի համար: Այսինքն՝ ապրանքի թափոն դառնալու փուլում ընկերությունը եւս անելիք ունի: Այդ պատասխանատվությունը վճարների տեսքով է լինելու: Բիզնեսից գանձվող վճարներն ուղղվելու են թափոնները հավաքագրող կազմակերպությունների ստեղծմանը, թափոնների վերամշակմանը»,-ասաց Լուսինե Ավետիսյանը:

Կախված ապրանքների տեսակից՝ փաթեթավորման միջոցներ, մարտկոցներ, էլեկտրոնային սարքավորումներ, անվադողեր եւ այլն, բիզնեսից գանձվող վճարները տարբեր են լինելու: Թափոնների կառավարման փորձագետ, Հայաստանի ամերիկյան համալսարանի «Յակոբեան» բնապահպանական կենտրոնի «Հայաստանում թափոնների կառավարման քաղաքականություն» ծրագրի ղեկավար Հարություն Ալպետյանը նշեց, որ այս գործընթացը նպաստելու է աղբավայրեր ուղղվող թափոնների կրճատմանը:

«Օրինակ՝ մարտկոց ներմուծող ընկերությունները ստեղծելու են շահույթ չհետապնդող կազմակերպություն, որը կազմակերպելու է թափոն դարձած մարտկոցների էկոլոգիապես անվտանգ գործածությունը, այն է՝ դրանց հավաքում, վնասազերծում կամ վերամշակում: Բիզնեսից գանձվող վճարների շրջանակում հաշվարկվելու են ինչպես ստեղծվող կազմակերպության վարչական ծախսերը, այնպես էլ թափոնների հավաքագրումը, իրազեկման արշավները, ենթակառուցվածքների ստեղծումը, վերամշակումը եւ այլն»,-ասաց Հարություն Ալպետյանը՝ ընդգծելով, որ այդ կազմակերպությունները պետության վերահսկողության տակ են լինելու:

Այս նոր գործընթացը ենթադրում է բիզնեսի համար հավելյալ ֆինանսական բեռ, ենթակառուցվածքների զարգացում, կրթական ծրագրերի անհրաժեշտություն: Այդ համատեքստում «Ամերիկայի առեւտրի պալատը Հայաստանում» ՀԿ նախագահ Էլինա Մարգարյանը կարեւորեց ինչպես իրազեկման աշխատանքների, կրթական ծրագրերի իրականացումը, այնպես էլ բիզնեսի, քաղաքացիների վարքագծի վերանայումը:

«Հայաստանը մեծ բարեփոխումների առջեւ է կանգնած, ու մենք այսօր խոսում ենք շրջանաձեւ տնտեսության մասին: Շատ կարեւոր է իրազեկման մակարդակի բարձրացրումը, ենթակառուցվածքների զարգացումը, վարքագծի փոփոխությունը: Այս առումով տեղական ընկերությունները երկար ճանապարհ ունեն անցնելու՝ սովորել միջազգային փորձը, որ անցումային շրջանը հեշտ լինի իրենց համար: Ի դեպ, վարքագծային փոփոխությունն անհրաժեշտ ոչ միայն բիզնեսի կողմից, այլեւ սպառողի: Ի վերջո, եթե մենք խոսում ենք թափոնի հավաքագրման մասին, նշանակում է, որ սպառողն աղբի տեսակավորման առումով անելիք ունի»,-ասաց Էլինա Մարգարյանը: Ծրագիրը պիլոտային տարբերակով ներդրվելու է մինչեւ 15 հազար բնակչություն ունեցող համայնքում: Ներկայում օրենսդրական փաթեթը մշակման փուլում է, այն շուտով կդրվի հանրային քննարկման:

*ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

ԳԱՎԱՌ

# ՌՈՒՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Կարմիրգյուղ բնակավայրում, «Ռոսսոտրուդնիչեստվո» գիտության եւ մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ, «Ռոսիա» հայրենակիցների ՀԿ-ի աջակցությամբ եւ Գավառի համայնքապետարանի հետ համագործակցությամբ, այսուհետ գործելու է ռուսական կրթական կենտրոն:**

Կենտրոնի բացման արարողությանը ներկա են գտնվել եւ կարմիր ժապավենը կտրել են Հայաստանում Ռուսաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը, Հայաստանում «Ռոսսոտրուդնիչեստվո»-ի ղեկավար Վադիմ Ֆեֆիլովը եւ Գավառ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Գրիգոր Դաշտոյանը:

Կենտրոնում, բացի երեխաների եւ մեծահասակների համար իրականացվող ռուսաց լեզվի անվճար դասընթացներից, կանցկացվեն նաեւ տարբեր ակումբային պարապմունքներ, միջոցառումներ եւ մրցույթներ:

Այն վերանորոգված է, կահավորված եւ ունի հարուստ գրադարան, որից կարող են օգտվել նաեւ ուսանողները:

Գավառի համայնքապետարանի աշխատակազմի տեղեկացմամբ՝ դեսպան Սերգեյ Կոպիրկինը Գեղարքունիքի մարզ կատարած շրջայցի ընթացքում այցելել է Գավառ համայնքի Գանձակ բնակավայրի՝ МИР ռուսաց լեզվի եւ մշակույթի մանկական կենտրոն:

Կենտրոնը ստեղծվել է անցած տարվա մայիսին Հայաստանում МИР հիմնադրամի (Միջազգային զարգացման ինստիտուտ) կողմից՝ Ռուսաստանի հաղորդակցության զարգացման ազգային գիտահետազոտական ինստիտուտի աջակցությամբ եւ Գավառի համայնքապետարանի հետ համագործակցությամբ:

Դեսպանն այցելել է կենտրոն, տեղում ծանոթացել հաստատության գործունեությանը եւ մասնակցել կենտրոնի սաների կողմից ներկայացված միջոցառմանը:

«Սա ռուսաց լեզվի եւ մշակույթի՝ Հայաստանում գործող երեք նմանատիպ կենտրոններից մեկն է, որտեղ անվճար հիմունքներով արդեն հաճախում է 10-16 տարեկան 45 երեխա: Այստեղ հնարավորություն ունեն ոչ միայն սովորել ռուսաց լեզու, այլեւ ծանոթանալ Ռուսաստանի պատմությանն ու մշակույթին:

Կենտրոնը հագեցած է ժամանակակից սարքավորումներով եւ մեծ գրադարանով»,-ներկայացրին Գավառի համայնքապետարանի աշխատակազմից:

*Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

## ՄՇԱԿՈՒՅԹ

«ԻՐԱՆԱՊԱՏՈՒՄ»

# ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԱՐԳԱՍԻՔ

**Երեւանի թիվ 16 գրադարանում կայացել է Խոսրով Խլղաթյանի «Իրանապատում» գրքի շնորհանդեսը: Գիրքը լույս է ընծայել «Նուռ» հրատարակչությունը՝ Հայաստանում Իրանի դեսպանատան մշակույթի կենտրոնի հովանավորությամբ:**

Գրքում ամփոփված են այն տպավորությունները, որոնք հեղինակը ստացել է 2022 թվականի օգոստոսին Իրան կատարած զբոսաշրջային այցի ինն օրերի ընթացքում: Գիրքը բաղկացած է 15 հոդվածներից, որոնք ընթերցողին տանում են դեպի Պարսկահայքի պատմաճարտարապետական գլուխգործոցներ հանդիսացող Սուրբ Ստեփանոս նախավկայի եւ Սուրբ Թադեի վանքեր, Ավարայրի դաշտ, Արաքս գետի արեւմտյան ափ, Յազդ քաղաքի հեթանոսական տաճար, Մահվան աշտարակ, Շիրազի դարպասներ, Շահչերաւի մզկիթ, Հաֆեզի դամբարան-թանգարան, հնագույն Պարսկաստանի մայրաքաղաք Պերսեպոլիս, Սեֆյան հարստության մայրաքաղաք Սպահան, որտեղ է գտնվում նաեւ Նոր Ջուղա հայկական թաղամասը, Քիրմանշահի Բեհիսթունյան ժայռ, որի վրա պարսից արքա Դարեհը թողել է պատմական արձանագրություն, եւ Ալիսադր գյուղի մոտ գտնվող ստորջրյա քարանձավ, որն աշխարհում բացառիկ է իր գեղեցկությամբ ու տարածվածությամբ՝ ավելի քան 11 կմ երկարությամբ:

Գրքի շնորհանդեսին մասնակցել են Երեւանի հայ-հունական քոլեջի ուսանողները, Ստեփան Լիսիցյանի անվան թիվ 34 դպրոցի աշակերտները, որոնք ուսումնական ծրագրով սովորում են պարսկերեն: Միջոցառմանը ներկա են եղել նաեւ Հայաստանում Իրանի դեսպանատան մշակույթի կենտրոնի ներկայացուցիչները:

Գրադարանի տնօրեն Լուսինե Մարգարյանը եւ Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան մշակույթի կենտրոնի պատասխանատուներն ազդարարել են թիվ 16 գրադարանում պարսկական գրքի անկյան բացման մասին, որտեղ կարող են այսուհետ այցելել պարսկերեն լեզվով ու մշակույթով հետաքրքրվողները:

«Այս գրքի ծննդյան համար իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում «Ժորժի հետ բացահայտենք Իրանը» տուրիստական կազմակերպության ղեկավար Ժորժ Աբրահամյանին, Հայաստանում Իրանի դեսպանատան մշակույթի կենտրոնի տնօրեն պարոն Ասադին ու «Նուռ» տպագրատանը: Առանձնահատուկ շնորհակալություն եմ հայտնում Երեւանի թիվ 16 գրադարանի տնօրեն Լուսինե Մարգարյանին՝ գրքի շնորհանդեսը պատշաճ կազմակերպելու համար:

Շնորհակալ եմ նաեւ շնորհանդեսին մասնակից դպրոցականներին, ուսանողներին, ուսուցիչներին եւ Հայաստանում Իրանի դեսպանատան մշակույթի կենտրոնի աշխատակիցներին: Սա իմ երկրորդ գիրքն է կամ երկրորդ հոգեւոր զավակը: Իրանն իր ահռելի պատմությամբ ու մշակույթով գոնե որոշակիորեն ընկալելու համար հարկավոր կլինի ճամփորդել քանիցս, ուստի չի բացառվում, որ առաջիկայում այս բովանդակության նոր գրքեր ծնվեն: Այս գիրքը նաեւ հայ-իրանական բարեկամության գնահատում է եւ անժխտելի արգասիք, որը պիտի միշտ պահպանենք, խրախուսենք ու զարգացնենք: Անչափ կարեւոր են նաեւ մեր լեզուների ու մշակույթների փոխադարձ շփումները, որոնք ավելի կմերձեցնեն հազարամյակներով իրար կողքի ապրող հայ ու իրանցի ժողովուրդներին: Իսկ իրանական հարուստ մշակույթին ու պատմությանն ավելի մոտիկից ծանոթանալու համար խորհուրդ կտամ անպայման այցելել Իրան ու սեփական աչքերով տեսնել այն հոգեւոր հարստությունը, որը տպավորվում է առաջին հայացքից ու հարստացնում մարդու ներաշխարհն ու գիտելիքները»,-ներկաներին է դիմել «Իրանապատում» գրքի հեղինակը:

*ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ*

ԱՃՈՒՐԴ

# ՃԱՆԱՉՄԱՆ ՈՒ ԳՐԱՎՉՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ

**Ավտոմեքենաների ամենակրfns կոլեկցիոներները եւ մեքենաների սիրահարները կհավաքվեն տարվա ամենաստասված ավտոմոբիլային իրադարձություններից մեկի համար: RM Sotheby's-ը մարտի 9-ին Դուբայում կանցկացնի իր առաջին աճուրդը, որտեղ ներկայացված կլինեն գոյություն ունեցող ամենացանկալի մեքենաներից երեքը. գրում է Hypebeast-ը:**

Նվիրված կոլեկցիոներները ոչ միայն կկարողանան հիանալ 2009 թվականի Mercedes-Benz SLR McLaren Stirling Moss-ով, 2016 թվականի Koenigsegg Agera RSR-ով եւ 2023 թվականի Aston Martin Valkyrie կուպեով, այլեւ իրենք կկարողանան թղթադրույքներ կատարել այս հիանալի մեքենաների եւ այլ իրերի համար, որպեսզի վերջում տուն տանեն բաղձալի մեքենան:

2009 թվականի Mercedes-Benz SLR MõLaren Stirling Moss-ը գերհազվագյուտ մեքենա է՝ բաց գլխամասով, եւ ունի 641 ձիաուժ հզորություն, իսկ դրա դիզայնը ոգեշնչված է լեգենդար 300 SLR մրցարշավային մեքենայից: Ընդհանուր առմամբ դրանից արտադրվել է 75 մոդել:

Երբեւէ կառուցված ընդամենը երեք 2016-ի Koenigsegg Agera RSR-երից մեկն ունի 1160 ձիաուժ հզորությամբ V8 շարժիչ, ածխածնային անիվներ եւ նորարարական Koenigsegg Dihedral Synchro-Helix դռներ, որոնք այն դարձնում են ինժեներական գլուխգործոց եւ հազվագյուտ հիպերմեքենա:

Վերջապես, 2023 թվականի Aston Martin Valkyrie Coupe-ն, Ֆորմուլա 1-ից ոգեշնչված դիզայնով եւ Cosworth-ի կողմից մշակված V12 հիբրիդային շարժիչով, ձեռնոց է նետում ավանդույթներին: Ընդամենը 150 օրինակով սահմանափակված՝ 160 ձիաուժ հզորությամբ այս գազանը խեղդում է ճանապարհի եւ ուղու միջեւ եղած սահմանները՝ սեփականատերերին ընձեռելով վարորդական անզուսպ հաճույք այն վարելու ընթացքում:

Բացի վերը նշված երեք ցնցող մեքենաներից, այլ լոտեր ներառում են հայտնի դասական եւ հազվագյուտ մեքենաներ, որոնք համապատասխանում են յուրաքանչյուր վարորդի ճաշակին:

RM Sotheby's աճուրդը, անկասկած, ճանաչման ու գրավչության նոր մակարդակներ կբերի Դուբային: Պատմական աճուրդը տեղի կունենա Ալսերկալ պողոտայի Concrete տարածքում:

RM Sotheby's Dubai-ը խորհրդանշական պահ է, որը կցուցադրի աշխարհի ամենանուրբ մեքենաների հավաքածուն քաղաքի աշխույժ գեղարվեստական եւ ճարտարապետական հրաշքների աշխարհում: Մասնակիցները ընկղմվելու են նորարարության եւ պատմության միաձուլման մեջ, որը նոր գլուխ է բացում համաշխարհային ավտոմոբիլային համայնքում:

*Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ*

ՄԱՐԶԱԿԱՆ

## ՀԱՋՈՂ ԵՆ ՄԵԿՆԱՐԿԵԼ

Հայաստանի մարմնամարզության հավաքականի անդամները հաջող են մեկնարկել աշխարհի գավաթի խաղարկության երկրորդ փուլում: Գերմանիայի Կոտբուս քաղաքում ընթացող աշխարհի գավաթի նժույգ-թափերի վարժության որակավորման փուլի արգելքը հաղթահարեց Գագիկ Խաչիկյանը: Եզրափակիչ են դուրս եկել նաեւ (օղակներից) Արթուր Ավետիսյանը եւ Վահագն Դավթյանը:

Օրեր առաջ Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեում կայացած աշխարհի գավաթի խաղարկության առաջին փուլում ոսկե մեդալակիր էր դարձել Արթուր Դավթյանը (հենացատկ) եւ արծաթե մեդալ էր նվաճել Վահագն Դավթյանը:

Աշխարհի գավաթի խաղարկության փուլերը վարկանիշային են Փարիզի 33-րդ ամառային օլիմպիական խաղերի համար:

## ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵՑ

Հայաստանի բասկետբոլի տղամարդկանց թիմը սկսեց պայքարն աշխարհի առաջնության որակավորման փուլում:

Ընտրակամ փուլի մեկնարկային խաղում Հայաստանի ազգային թիմը հյուրընկալվեց Ավստրիայի ընտրանուն: Վիեննայում կայացած խաղի առաջին քառորդում Հայաստանի ազգային թիմը չնչին առավելություն ուներ՝ 23:29: Երկրորդ քառորդում արդեն Ավստրիայի ընտրանին առավելություն ստացավ ու թիմերը մեծ ընդմիջման գնացին Ավստրիայի հավաքականի առավելությամբ՝ 54:48: 3-րդ եւ 4-րդ քառորդներում Ավստրիայի հավաքականը շարունակեց տիրել նախաձեռնությանն ու ի վերջո հաղթեց 106:91 հաշվով:

Հայաստանի ազգային թիմի մարզիչ Ռեքս Կալամյանը ներկա չէր խաղին: Հաջորդ հանդիպումն ընտրանին կանցկացնի փետրվարի 25-ին՝ Երեւանում հյուրընկալելով Ալբանիային:

## ՄԵԿՆԱԲԱՆԵԼ Է

Գերմանիայի հավաքականի գլխավոր մարզիչ Յուլիան Նագելսմանը մեկնաբանել է Մադրիդի «Ռեալի» կիսապաշտպան Տոնի Կրոսի որոշումը ազգային թիմ վերադառնալու վերաբերյալ:

«Նա գերազանց կհարմարվի թիմում եւ կդառնա կատարյալ կապող օղակ կիսապաշտպանությունում: Նրա փորձը մեզ օգուտ կբերի: Տոնի Կրոսը ամենալարված խաղում էլ պահպանում է հանգստություն եւ ինքնատիրապետում:

Նա հստակ տեսակետ ունի հավաքականի այսօրվա վիճակի վերաբերյալ: Մեր զրույցներից զգացվում էր, որ նա ցանկանում է մասնակցել տնային Եվրո-2024-ին»,- Նագելսմանի խոսքը մեջբերում է Bayern & Germany-ն:

Տոնի Կրոսը 2,5 տարվա դադարից հետո կվերադառնա Գերմանիայի հավաքական: Նա կմասնակցի հունիսի 14-ից հուլիսի 14-ը Գերմանիայում անցկացվելիք «Եվրո-2024»-ին:

34-ամյա ֆուտբոլիստը Գերմանիայի հավաքականում հանդես է եկել 2010-2021 թվականներին՝ 106 խաղում խփելով 17 գոլ: Նա 2014-ին դարձել է աշխարհի չեմպիոն:

● *Մարտի 5-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի կունենա ««Զարթոնք». Պարույր Սեւակ - 100» գրական-երաժշտական երեկոն: Տոմսերի արժեքը՝3000-10000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

# ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

*Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ*

## ՖԻՆԱՆՍՆԵՐ

**ՀԱՐՑ. Ի՞նչ է Կենտրոնական բանկի անկախությունը:**

*Արամ Գաբրիելյան (42 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Գների կայունության ապահովման համար ինստիտուցիոնալ կարեւոր նախապայման է ԿԲ-ների անկախությունը: Ուսումնասիրությունները վկայում են, որ ԿԲ-ների անկախությունը (գործառնական) նպաստում է իրականացվող դրամավարկային քաղաքականության վարկունակությանը՝ մեծացնելով շուկայի արձագանքը ԿԲ ազդակներին: Էմպիրիկ վերլուծությունները բացահայտել են ԿԲ-ի անկախության եւ ցածր գնաճի միջեւ ուղղակի կապ:

Դրամավարկային քաղաքականության իրականացման առումով տարբերակում են ԿԲ-ի անկախության երեք աստիճան.

- նպատակի սահմանման,
- նպատակային ցուցանիշի սահմանման,
- գործառնական:

*ՀՀ կենտրոնական բանկ*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Անկախության ամենաբարձր աստիճանը նպատակի սահմանման անկախությունն է, որն ունի, օրինակ, ԱՄՆ ԴՊՀ-ն: Ելնելով տնտեսական քաղաքականության գերակայություններից՝ նա կարող է փոփոխել գլխավոր նպատակը: ՀՀ-ի դեպքում ԿԲ-ն օժտված չէ այս աստիճան անկախությամբ. ԿԲ-ի գլխավոր նպատակը սահմանված է ՀՀ սահմանադրությամբ եւ «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով: Նպատակային ցուցանիշի ընտրության անկախությունը Հայաստանում սահմանվում է «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով: Ինչ վերաբերում է գործառնական անկախությանը, այն ենթադրում է, որ ԿԲ-ն ինքնուրույն կարող է կիրառել իր գործիքակազմը գլխավոր նպատակին հասնելու համար: ՀՀ ԿԲ-ն ունի այս աստիճանի անկախություն, ինչով օժտված են ոչ բոլոր երկրների ԿԲ-ները: Օրինակ՝ Անգլիայի ԿԲ-ն մինչեւ 1998 թվականը չուներ գործիքակազմի կիրառման ինքնուրույնություն. դրան միջամտում էր գործադիր իշխանությունը:

## ԿԱՐԳ

**ՀԱՐՑ. Անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ վկայականը կորցնելուց հետո տրամադրվու՞մ է արդյոք դրա կրկնօրինակը:**

*Սարգիս Նալբանդյան (58 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** 2019 թվականի հուլիսի 1-ից հետո վկայականի կրկնօրինակ չի տրամադրվում, այլ վկայականը փոխարինվում է նոր գրանցման վկայականով՝ պետական գրանցման իրական ամսաթվի վերաբերյալ նշումով:

*ՀՀ կադաստրի կոմիտե*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Ընդ որում՝ մինչեւ 2019 թվականի հուլիսի 1-ը տրամադրված գրանցման վկայականը նոր գրանցման վկայականով փոխարինվում է դրա համար դիմումը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ներկայացվելու օրվանից 2-րդ աշխատանքային օրը, որի համար վճար չի գանձվում:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*

Volkswagen-ը եւ Audi-ն վերանորոգման համար 261 հազար ավտոմեքենա հետ կկանչեն:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

**«Հայմամուլ» ՓԲԸ**
հեռ. 45-82-00, 45-19-11

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

2011 Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

### ԱՌԱՋԱՐԿ
### հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| Շիրակ | 0 - 3<br>0 + 5 |
| Կոտայքի լեռներ | 0 - 3<br>0 + 4 |
| Կոտայքի նախալեռներ | + 2 + 4<br>+ 6 + 8 |
| Գեղարքունիք | 0 - 3<br>0 + 4 |
| Լոռի | 0 - 3<br>+ 3 + 6 |
| Տավուշ | - 1 + 2<br>+ 4 + 7 |
| Արագածոտնի լեռներ | 0 - 3<br>0 + 3 |
| Արագածոտնի նախալեռներ | + 1 + 4<br>+ 6 + 10 |

| | |
|---|---|
| Արարատ | + 5 + 7<br>+10 + 12 |
| Արմավիր | + 4 + 6<br>+10 + 12 |
| Վայոց ձորի լեռներ | 0 - 3<br>+ 1 + 4 |
| Վայոց ձորի նախալեռներ | + 5 + 7<br>+ 9 + 12 |
| Սյունիքի հովիտներ | + 2 + 5<br>+7 + 11 |
| Սյունիքի նախալեռներ | 0 - 3<br>+ 3 + 6 |
| ԼՂՀ | 0 - 3<br>+ 4 + 6 |
| Երեւան | + 3 + 5<br>+ 7 + 10 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **22.2.2024**
Հասցեն՝ Գերաքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*